

ՀՀ Արմավիրի մարզի
«Վաղարշապատի Ռ.
Պատկանյանի անվան N9
հիմնական դպրոց» ՊՈԱԿ
հեռ. +374231 4-29-66
ք. Վաղարշապատ
Օրջոնիկիձե27/ 1
Էլ. փոստ. patkanyan9@mail.ru



Армавирская область РА
ГНО «Осн. школа N 9
им. Р. Патканяна
г. Вагаршапат»
тел. +374231 4-29-66
г. Вагаршапат
ул. Орджоникидзе27/ 1
эл. почта: patkanyan9@mail.ru

N70
02.09.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Մարգարետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Արմավիրի մարզի << Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը հայտարարել է մրցույթ՝ պատմության(12դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Կից ուղարկում եմ հայտարարության տեքստը:

ԴՊՐՈՅԻ ՏՆՕՐԵՆ՝



Ս.ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության (12դասաժամ)ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Վաղարշապատ, Օրջոնիկիձե 27/1:

Տեղեկությունների համար զանգահա րել՝ (0231) 4-29-66 հեռախոսահամարով: